

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՅԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԱՏՈՍ ՅԱՐՃԱՆՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ*

Նարինե Հովհաննիսյան

Բանալի բառեր` ռազմի բարոյաբանություն, հեթանոսապաշտություն, արիապաշտություն, ուժապաշտություն, կրավորական հոգեբանություն, մաքառում, ցեղասպանություն:

20-րդ դարասկզբին արևմտահայ իրականության մեջ հեթանոսական գաղափարաբանության նկատելի շրջադարձը դառնում է հստակ գեղագիտական ուղղվածություն, որի հետևորդներից էր Ատոմ Յարձանյանը: Քրիստոնեության սխալ ըմբռնված գաղափարները, մասնավորապես հնագանդությունը առաքինություն համարելը, դարերով քարոզվելով, ժողովրդի մեջ գրեթե սպանել էին պայքարի և ընդվզումի ճշմարտությունը: Քրիստոսի պես անդինադիր նահատակվող, քրիստոսվող ժողովրդի կրավորական հոգեբանությունը փոխելուն միտված հեթանոսական-արիական գաղափարաբանությունը ռազմաքաղաքական տվյալ պայմաններում արմատապես կարող էր բեկել ազգային գոյաբանության ամբողջ ընթացքը: Առանց գենքի ու կռվի պարտվող հայրորդին շատ բան կարող էր փոխել ազգային ճակատագրում: Բանաստեղծն ընդվզում է ցեղի պատմական ընթացքն առաջնորդող գաղափարաբանության դեմ, որ անընդմեջ ողբերգությունների ու կոտորածների մեջ սպառել է իրեն՝ հռչակելով արիական գաղափարաբանությունը կամ ուժապաշտությունը: «Անարժեք է գրականությունը, եթե դա ցեղի ոգու ինքնարտահայտությունը չէ, եթե նրա մեջ ցեղի ոգին չի ձառագայթում: Ցույց տվեք ժողովրդին իր ցեղի արև-դեմքը, որ նա ինքնատեսությամբ բարձրացնե իր խոնարհ ճակատը»[1], - գրականության նույն խնդիրն է գաղափարանշում Նժդեհը՝ ցեղակրոնության գաղափարակիրն ու ուխտավորը: Դարավերջի արևմտահայ գաղափարագեղագիտական այս ուղղվածության առաջնորդ դեմքը Դ. Վարուժանն է, որն իր ստեղծագործական ծրագրով կենսականորեն անհրաժեշտ գեղարվեստական նոր մտածողության վերելք նշանավորեց:

Յարձանյանի ստեղծագործ հանձարը նույնքան փառահեղ կարող էր լինել խաղաղության արշալույսների օրհներգության մեջ: Ազատության մեջ երբեմն ծաղկող կյանքի ստեղծագործ ոգևորությունը որքան էլ այցի գնար նրա բանաստեղծական հզոր տարերքին, հայրենիքի արյան շառագույնը, վերստին խուժելով, տիրական պիտի դառնար նրա պոեզիայում: Կյանքի բանաստեղծական ընկալումը հոգում՝ Յարձանյանն իր հանձարն ընծայաբերեց ազատության պայքարի գաղափարին՝ իրեն ներհատուկ գեղապաշտության տեղ բերելով ռազմի ոյուցազնահեղ ոգին, ազատության համար կյանքով սխրագործելու, ազգային պարտադրվող մահն հերոսացումով հաղթահարելու գաղափարն ու կամքը՝ արարելով բանաստեղծության արժանավայել մի տեսակ՝ ռազմի պոեզիա կամ ռազմերգություն:

Բախտը Սիամանթոյին օժել էր բանաստեղծական հանձարով, ճակատագիրը սահմանել էր լինել կոտորածի և մաքառումի բանաստեղծ: Կյանքի փթթուն զգայություններն անթեղած՝ ազգային ճակատագրի ողբերգությունը դարձավ Սիամանթոյի ռազմերգության ներքին առանցքը, ջարդերի տեսիլները՝ ներհոգեկան շղթան, ազգային գոյաբա-

* Հոդվածն ընդունվել է 21.01.17:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնը:

նության խնդիրը՝ գերնպատակը: Բանաստեղծի առաջին գիրքը՝ «Ղյուցազնորեն»-ը, ահագնագում էր արիանալու, մաքառելու կամ անգեն, կրավորական նահատակվելու հարցադրումը: Անընդմեջ կոտորածները, պետականության բացակայությունը, թուրք բռնակալության դարավոր լուծը ազգային հոգեկառուցվածքում պատմականորեն ձևավորել էին պարտվողական-կրավորական հոգեբանություն, և Յարձանյանի «Ղյուցազնորեն»-ը հերոսացումի ռազմական էր, որ բերում էր սխրագործելու ազգային գիտակցության գաղափարը, կայծի պես բռնկվող հերոսացումներն ու ցեղի դիմադրողականության ներուժը ժողովրդականացնելու հոգեբանությունը, հոգևոր ստրկության փոխարեն դյուցազնորեն կռվելու կորովը:

Յարձանյանը ցեղի ուժի և ցեղի արժանապատվության քերթող է. «Կրդարությունը ստեղծել պետք էր և ազատությունը մոլեգնաբար հափշտակել»: Իր պոեզիայով բանաստեղծը հռչակում է սեփական ուժը չձանաչող ժողովրդի ցեղական կորովը, բարոյական անխոցելի ամրությունը՝ մաքառումի վստահությամբ հեղափոխելով անկախություն չունեցող կրավորական նահատակի հոգեբանությունը: «Ինչ արժե հանձարը, ... երբ իր ցեղի ձակատագրի գերզգացողությունը չունի, և չի սնուցաներ իր ցեղի հավիտենականության ձգտումը: Միևնույն չէ, կա թե չկա նմանը, երբ իր շրթունքներին ցեղի խոսքը չէ, և չգիտե վերադաստիարակել, արիացնել ու վարել զանգվածները...»[2]:

Եվ պաղատանքի, աղոթքի, լաց ու կոծի և ողբի այն մատյաններուն մեջ,
Ուր դար առ դար իմ սերունդներս իրենց արյունը և տառապանքն են լացեր,
Մեկ կողմ նետեցի ես զանոնք, պարտութենն ստրկացում և աղաչանքե արցունք
չէրթալու համար...

«Երևակայությունը - Սիամանթոյի տաղանդին ամենեն տիրական գիծն է... Երևակայության միացած գաղափարականը՝ հռետորությունը կը ծնի. երևակայության միացած զգացումը կը ծնի վսեմը: Յարձանյանի արվեստը արդյունք է այս երկու զուգավորություններուն»[3]: Հզոր երևակայությամբ բանաստեղծելով պայքարի ահեղ ընթացքը՝ Սիամանթոն աստվածացնում է ազգի փառահեղ հերոսներին, որոնք, մահն արհամարհելով, գերմարդկային տառապանքների մեջ՝ կախադանների վրա, արքայավայրերի շղթաներում, հերոսամարտերում, օրհնում են իրենց գաղափարն ու գործը՝ ազգի պատմության և ձակատագրի վրա դրոշմելով իրենց փառահեղ կենսագրությունը. «Սիամանթո իր կենդանության նկատված է արևմտահայ գրականության ամենեն սիրված և հռչակված բանաստեղծը, որուն երգը, բացարձակորեն ոչ անձնական, քրմական ու հանդիսավոր՝ եղավ թարգմանն ու խորհրդանիշը ցեղին տառապանքին, վիրավորված արժանապատվության և հպարտ ծառացումին»[4]:

Ասպետի կերպարը Յարձանյանի պոեզիայում հոգեբանական գաղափարատիպ է՝ օժտված իր ցեղի նախնական հոգեգծերով: Բանաստեղծի սքանչացումն առ հայորդու բացարձակ նվիրվածությունը, սրբազնագույն ցավն ու աստվածարժան սխրանքը նույնացնում է նրան ասպետի կերպարին: «Հին դյուցազները աշխարհակալներ էին կամ ասպետներ. նորերը, Յարձանյանի հերոսները, հեղափոխականներ են կամ առաքյալներ»[5]: Դարերի ստրկության մեջ իր նախաստեղծ դիմագիծը կորցնելու չափ խեղձացած ժողովրդի հոգեբանությանը Յարձանյանի հայորդին վերադարձրեց ցեղական կորովը, գերհզոր կամքն ու անկարելիության աստիճանի ներքին զորությունը: «Ես երգելով կ'ուզեմ մեռնիլ» բանաստեղծության մեջ քերթողն ու ռազմիկը խորհրդանշում են գաղափարն ու կամքը, ոգին և ուժը: Խորհրդապաշտության սահմանին հասնող հիացմունքը, բարձր բարոյականը, խռովահույզ ապրումների գիշերվա մեջ հայտնված ռազմիկի կիսաստվածային կերպարանքը հաստատում են կյանքի դյուցազնորենը. «Յարձանյանը քնար չունի: Իր երգը կոփյուն մըն է՝ զօր մեր նախնիքը Նավասարդի Տոներուն կը

հնչեցնեին՝ իրենց աշտեն գարնելով վահաններու ոսկեցոյ կումբին»[6] :

«Ազատագրության հույսը փայտայելուց հետո Յարձանյանի համար հեշտ չէր ներկայացնել սեփական ժողովրդի հերթական ողբերգությունը,- նկատում է Դ. Գասպարյանը,- բայց նրա հայրենասիրական ու քաղաքացիական ջիղն այնքան ուժեղ էր, որ դիմում է այդ դժոխքը բանաստեղծության վերածելու քայլին»[7]: Կոտորածների շառագույնը, ծավալվելով «Հոգեվարքի և հույսի ջահեր» գրքում, ահագնանում է Յարձանյանի հաջորդ՝ «Կարմիր լուրեր բարեկամես» գրքում: Կարմիրը գույնից վերածվում է մտահայեցումի. մղձավանջի մեջ տեսանում են մեռելներին գիշատող ագռավների բազմությունները, դիակների ծանրության տակ ճռնչացող սայլերը, դիակույտների մեջ մնացած կիսամեռելների հոգեվարքը: Ողբերգական սարսափը վերածվում է հոգեկան երևույթի. «Մահվան տեսիլք» բանաստեղծությունը եղերական պատկերների մտասևեռումն է. «Փողոցների մեջ մորթված սերունդներ կը տեսնեմ, // Եւ ամբոխներ անպատմելի սրածուններե դարձող... // Արևադարձային տաքություն մը կը բարձրանա // Հրդեհի տրված ազնվական քաղաքներեն...»: «Մտասևեռումը, այսինքն՝ չափազանց ուժեղ կենտրոնացումն ու շիկացումը,- նկատում է Հ. Թամրազյանը,- Միամանթոյի տաղանդի հիմնական հատկանիշներից մեկն է»[8]:

«Կարմիր լուրեր...» շարքի բանաստեղծությունները՝ գրված կիլիկյան ջարդերի անմիջական տպավորությամբ, ականատեսների վկայություններ են, որ վերահաստատվում են գերմանական արխիվներում պահված ցեղասպանության վավերաթղթերով: Դրվագ առ դրվագ տեսանում է թուրք «արյունկզակ» խուժանի եղեռնագործությունների համապատկերը: «Մոխիրներու և մահերու դանթեական ճանապարհին» որպես ողբերգության առանձին տեսիլներ պատկերանում են «Սուզը», «Պարը», «Լոզանքը», «Դաշույնը», «Քավություն», «Խաչը», «Զավակը», «Կույրը», «Թթենին», «Խեղդամահ» և այլն:

Գեղարվեստական մտածողության որոշակի հատկանիշներ, գերազանցապես մտապատկերների առկայությունը, պատկերների հյուսքը, վերացական ոգին նկատի ունենալով՝ քննադատությունը Միամանթոյին դասել է խորհրդապաշտների շարքին. «Վեռլենի, Բողլեի, Մալարմեի հայրենիքում նա չի կարող չենթարկվել այս սիմվոլիստ-դեկադենտների ազդեցությանը»[9], - նկատում է Վ. Նալբանդյանը՝ ստեղծագործական ակունքների հետ մատնանշելով Միամանթոյի արվեստի խորհրդապաշտական ոգին: Խորհրդապաշտական հայեցողության ազդեցությամբ հանդերձ՝ խորհրդապաշտությունը Միամանթոյի պոեզիայում գեղագիտական աշխարհայացք չդարձավ: «Անխառնորեն ռոմանթիկ է,- նկատում է Ա. Չոպանյանը,- իրմե ավելի ռոմանթիկ բանաստեղծ չենք ունեցած, նույն իսկ անոնց մեջ, որ պատմականորեն «ռոմանթիկ» կոչված շրջանի մեջ ապրած են»[10]:

Մաքառումի և անկշռելի ցավի մատյան է Միամանթոյի քերթությունը: Հզոր երևակայությունը, բանաստեղծական անսանձ տարերքը, խոսքի գաղափարաբանական ներքին կշիռը բանաստեղծության աշխարհում հաստատեցին պոետական նոր դիմագիծ: «Վրեժի մարտագող շեփոորդ և տառապանքի խելահեղ բանդագուռող»[11], - այս տարերքի հակակշիռ ուժի մեջ է Միամանթոյի արվեստի հզորությունը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նժդեհ Գ., Հատընտիր, Եր., 2001, էջ 320:
2. Նույն տեղում, էջ 141:
3. Կարուժան Դ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Եր., 1987, էջ 159:
4. Միամանթո, Բանաստեղծություններ, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1993, էջ 5:

5. Վարուժան Ռ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 159:
6. Նույն տեղում, էջ 164:
7. «Հայոց լեզու և գրականություն», Եր., 2010, թիվ 4, էջ 17-18:
8. Թամրազյան Հ., Սիամանթո, Եր., 1964, էջ 67:
9. «Մշակ», 1901, N291:
10. «Անահիտ», Թ տարի, 1907, թիվ 3-5, էջ 89:
11. Վարուժան Ռ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 208:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ցեղասպանությունը և ազգային գոյաբանության խնդիրը Ատոմ Յարձանյանի պոեզիայում Նարինե Հովհաննիսյան

Հոդվածում քննաբանվում են Ատոմ Յարձանյանի ռազմի պոեզիայի բարոյական տարածքն ու ցեղասպանության մտասևեռումի վերաճած գրական շարքերը: 20-րդ - դարասկզբին արևմտահայ իրականության մեջ հեթանոսական գաղափարաբանության շրջադարձը դառնում է հստակ գեղագիտական ուղղվածություն, որի հետևորդներից էր Սիամանթոն: Քրիստոսի պես անդիմադիր նահատակվող, քրիստոսվող ժողովրդի կրավորական հոգեբանությունը փոխելուն միտված հեթանոսական-արիական գաղափարաբանությունը ռազմաքաղաքական տվյալ պայմաններում արմատապես կարող էր բեկել ազգային գոյաբանության ամբողջ ընթացքը: Բանաստեղծն իր տառապյալ եղբոր՝ ռազմիկի հետ ընդվզում է ցեղի պատմական ընթացքն առաջնորդող գաղափարաբանության դեմ, որ անընդմեջ ողբերգությունների ու կոտորածների մեջ սպառել է իրեն՝ հռչակելով արիական գաղափարաբանությունը կամ ուժապաշտությունը: Մաքառումի և անկշռելի ցավի մատյան է Սիամանթոյի քերթությունը: Հզոր երևակայությունը, բանաստեղծական անսանձ տարերքը, խոսքի գաղափարաբանական ներքին կշիռը բանաստեղծության աշխարհում հաստատեցին պոետական նոր դիմագիծ:

РЕЗЮМЕ

Вопрос геноцида и национальной идентичности в поэзии Атома Ярджаняна Наринэ Аванесян

***Ключевые слова:** этика войны, неопишущая боль, преклонение перед язычеством, преклонение перед силой, пассивная психология, борьба, геноцид.*

Данная статья рассматривает нравственные аспекты военной поэзии Атома Ярджаняна в одном ряду с литературой о Геноциде. В начале XX века в западноармянской действительности языческая идеология становится одним из источников развития культуры и литературы, в том числе и в творчестве Сиаманто. Языческо-арийская идеология, направленная на изменение христианских ценностей народа, ставшего впоследствии, подобно Христу, невинной жертвой, в создавшихся политических условиях была протестом против пассивности народа. Поэт вместе со своим братом, пострадавшим в вооруженных стычках, считая, что идеология, ведущая к резне и национальной трагедии, себя исчерпала, призывает к возврату к арийским идеалам. Мощное воображение поэта, необузданная страсть его поэзии, внутренняя сила поэтического слова подтверждают новые черты поэтического образа.

SUMMARY

**Genocide and National Ontology in the Poetry of Atom Yartchanyan
Narine Hovhannisyan**

Keywords: *ethics of war, unmeasurable pain, paganism, worship of force, passive psychology, struggle, genocide.*

The article reviews the moral aspect of Atom Yartchanyan's military poems and his contemplations upon the Genocide reflected in his literary pieces. Paganism in Western Armenian reality, evolving at the beginning of the 20th century, marked a turning point in ideology and establishing itself as a distinct aesthetic tendency. It was ardently supported by Siamanto. This pagan and Arian ideology was tended to change the ideology of a nation, unresistingly sacrificing itself, just as Christ. This ideology might have radically altered the whole course of national ontology in the given military and political situation. The poet and his brother-warrior propagate Arian ideology or the worship of power and thus revolt against the ideology which had led the nation throughout the history and which had exhausted itself in tragedies and massacres. Siamanto's creation is a book of struggle and immeasurable pain. Siamanto's strong imagination, his passionate poetic talent, ideological underlying of his discourse have established a new image in the world of poetry.